Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 14 ԱՐԵԳ 4383 — Հ. Տ. 21 ՄԱՐՏ 1892 Թիւ 14

ԴԱՆՈՒԲ

LE DANUBE

ՀԱՆԴԷՍ ԵՕԹՆՕՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 րուպլի թղթադրամ։

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 րուպլի թղթադրամ։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆրանսերէն լեզուով։

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ դրամ պէտք է ղրկել հետեւեալ հասցէով։

M. S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal "TANOUP"
(BULGARIE) ROUSTCHOUK

ՖՕՔՇԱՆ

Ֆօքշան Ռումանիոյ հարուստ եւ վաճառաշահ քաղաքներէն մին է Մոլտաւիոյ մէջ. գլխաւորաբար գինւոյ վաճառականութիւնը որ ամբողջ Եւրոպիոյ կողմերը կը խրկուի։

Ունի 100 տուն Հայ. գաղթած Հունգարիայէն Անւոյ հալածեալ 40 հազար ընտանեաց մնացած բեկորներն, եւ փոքրիկ մաս մ'ալ գաղթած են Պուլկարիոյ Ռուսճուգ եւ Սիլիսթրէ քաղաքներէն գրեթէ մի դար առաջ։

Ֆօքշան ունի 3 եկեղեցի, Ս. Աստուածածին. Ս. Գէորգ եւ Ս. Յարութիւն (այս վերջինը գերեզմանատան մէջ։) [*]

Կան երկու վարժարաններ մին արական Ս. Ղեւոնդեանց եւ միւսը իգական Ս. Հռիփսիմեանց. երկուքն ալ նորակառոյց Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ բակի մէջ։

Ունի երկու Քահանայ Արժ. Տ. Գէորգ հայր Հալաչեան եւ Արժ. Տ. Պետրոս Մամիկոնեան։

Եկեղեցիք ունին 8000 ֆրանքի մօտ տարեկան եկամուտ. այնչափ ալ ծախք, կը մատակարարուին յատուկ հոգաբարձութեան մը ձեռամբ։

Երկսեռ վարժարանք նախակրթարանի 4 տարուան ընթացք ունին, կ'ուսանին Հայերէն եւ Ռոմաներէն հանդերձ իւրեանց հետեւորդներովն, արական վարժարանի ուսանողաց թիւն է 25 եւ Ուսանողուհեաց թիւն 35–40։

Երկսեռ վարժարանաց պաշտօնէից թիւն է 7 եւ տարեկան ծախքն է 10,000 ֆրանք, որոյ մեկ մասն "Հայաստան" անուն ընկերութեան գանձէն կը վճարուի եւ մեկ մաս մ'ալ աշակերտաց թոշակներէն կը հոգացուի յատուկ հոգաբարձութեան մը միջոցաւ։

12–13 հոգի կը յաճախեն յօտար վարժարանս ուր կ'ուսանին սովորական ուսումներ. Պուքրէշթի բարձրագոյն վարժարանաց մէջ կ'ուսանին 3–4 Հայ ուսանողներ որոնք երկրաչափական ճիւղն կը մշակեն։

Հայերն ընդհանրապէս վաճառական են, փոքր մաս մի եւս ագարակատէր են եւ այգեգործ։ Գործարանատէրք չ'կան։

4–5 Հայ պաշտօնեայներ կան երկաթուղւոյ կայարաններն։

---

[*] Եկեղեցւոյ շինութեան եւ յիշատակարանաց մասին պ. նամակագիրը չէ բարեհաճած ոեւէ տեղեկութիւն մի տալ. բայց մեզ այնպէս կը թուի թէ, Ֆօքշանի եկեղեցւոյ շինութեան եւ վերանորոգման յիշատակագրեր անշուշտ պէտք լինին, զի այդ քաղաքի գաղթականութիւն ունեցած է փառաւոր անցեալ մը. սակ քաջ գիտեմք 'ի պատմութենէ։ Ծանօթ. Խմբ։

Տեղական իշխանութիւնը ինչպէս Հայոց նոյնպէս ալ օտար ազգայ հետ լաւ են։

Կան երկու ընկերութիւններ, մին «Հայաստան» անուն որ երկսեռ վարժարանաց նպաստելու նպատակաւ է կազմեալ. և միւսն «Բարեգործական ընկերութիւն» որ միայն աղքատաց կ'օգնէ. այս ընկերութեանց անդամք չափահաս և պատուաւոր անձնաւորութիւնք են։

Տեղս կան 50–60 պանդուխտ Հայեր. եկած մեծագոյն մասամբ Մուշէն, և մաս մի ևս փոքր Ասիոյ կողմերէն. օրական 1–1½ ֆրանք հայիւ կրնան շահիլ և այնչափ ալ կը ծախսեն. ընդհանրապէս բեռնակիր են և գործաւոր ճանապարհներու վրայ։

Քահանայ չ'եղած տեղերն մօտակայ քաղաքի Հայ քահանայն կը կատարէ եկեղեցւոյ խորհուրդներն և կը մատակարարէ կրօնական պիտոյքներն 'ի պահանջել հարկին։

Անցելոյն մէջ նշանաւոր, աղքատէր և բարեգործ անձնաւորութիւններ ունեցած է քաղաքիս դաղթականութիւնը և ներկայումս ալ ունի՝ որոնք ամենայն կերպով կ'աշխատին Եկեղեցւոյ և վարժարանի լուսաւորութեան և յառաջադիմութեան համար։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԵԱՇ 7 ՄԱՐՏ 1892

. . . . ԽՄԲԱԳԻՐ

Դարձեալ Առաջնորդի խնդիր.— Մօտիկ երեք տարի է քանի որ Ռումանիոյ մէջ Առաջնորդութեան խնդիրը երևան ելաւ, կարծեմ թէ Պրաիլա քաղաքէն էր։ Այն ատեն այս խնդրոյ վրայօք նամակ մը գրեցի «Արմէնիա» լրագրոյ Պատուական խմբագրութեան, որ հրատարակուեցաւ 1889 թուականին 67 և 68 թերթերուն մէջ, որով Ռումանիոյ Հայոց դրութեան և վիճակին վրայ մանրամասն խօսած եմ։

Հիմակ միշտ Պրաիլայէն նամակ մը կը տեսնեմ հրատարակուած Ձեր Պատուական «Դանուբ» լրագրոյ 9 և 10 թերթերուն մէջ «Մեղու» ստորագրութեամբ որ դարձեալ Առաջնորդի խնդիրը Ռումանիոյ Հայոց մէջ օրուան խնդիր ընելու կը ջրաղի։

Կ'երևայ թէ պ. նամակագիրը դեռ լաւ ուսումնասիրած չէ այս տեղի Հայոց ո՛չ կացութիւնը և ո՛չ ալ երկրիս օրէնքները անոր համար լաւ սեպելի նախ համառօտ տեղեկութիւն մը տալ երկրիս ընկերական օրինաց և ապա տեսնել եթէ պ. Մեղուի պահանջմունքը գործադրելու տեղի ունի։

Հին ժամանակներէ 'ի վեր մինչև 1865 թուականը, Մկրտութեան, ամուսնութեան եւ թաղման մատեանները եկեղեցականաց ձեռքն էին, բայց անկէ ետքը այս իրաւունքները մանաւոր դրասեղանի մը յանձնուեցան, Քաղաքապետին հսկողութեան տակ։ Առանց այս դրասեղանէն եկած և Քաղաքապետին ստորագրութեամբը վաւերացած հրամանագրին, քահանայ մը չկրնար ո՛չ պսակել, ո՛չ մկրտել և ո՛չ թաղել։

Ամուսնութիւնը նախ քաղաքապետական պահը պիտի կատարուի, և ամուսնացեալը ինչպէս նաև իրենց չորս վկայները այն տեղի մատեանները պիտի ստորագրեն։ Նորածին մը միշտ այն տեղ պիտի մատենագրուի երկու վկայներով նմանապէս և ննջեցեալ մը նախ քաղաքապետական դրասենեակը պիտի մատենագրուի նոյնպէս երկու վկայներով։ Միայն վտանգաւոր պարագայի մէջ նորածին մը կրնայ մկրտուիլ քաղաքապետական տուներու մէջ դրուելէ առաջ։

Ըստ սահմանադրութեան նոր ամուսնացեալները պարտաւորեալ են քաղաքական ամուսնութենէ ետքը եկեղեցական պսակն ալ ընդունիլ բայց այս վերջի պարտաւորութիւնը չ'կատարուիր համար, օրէնքը մանաւոր պատիժ չ'գրեր, վասնզի օրինաց մէջ գրուած է թէ «երկու անձինք այն վայրկենէն որ միմեանց հետ ամուսնանալու հաճութիւնը յայտնած են ըստ օրինաց, իրենք արդէն ամուսնացեալ են առանց ուրիշ պայմաններէ կախում ունենալու։ Նմանապէս օրէնքը չ'պատժեր և ո՛չ անոնք որ իրենց զաւակունքը չեն մկրտեր։

Քաղաքական օրինօք կատարուած ամուսնութիւնները միայն դատաստանական ատեանը կրնայ լուծել։ Ամուսնալոյծ ընկերները չեն կրնար մէյ մ'ալ միմեանց հետ ամուսնանալ, բայց ուրիշներու հետ կ'ամուսնանան առանց եկեղեցական արձակմանն կամ հրամանին ալ դիմելու, և քահանայն այս երկրորդ ամուսնութեան հրամանագիրն ալ տեսնելով, դարձեալ պարտական է եկեղեցական պսակն ալ կրկնելու։

Խղճմտանքի ազատութիւնը ընդարձակ տարածութիւն ունի ազատութեան։ Ամէն մարդ կրնայ հաւատալ ինչ որ կ'ուզէ, կրօնից նկատմամբ, և կը-

նայ ապրիլ ինչպէս որ ձեռք կուտայ իրեն, կենակցութեան նկատմամբ։ Երիտասարդ և օրիորդ մը մէկզմէկու սիրահարեալ կ'ապրին առանց ամուսնութեան, այսպիսի կեանք մը տանող անձինք թէպետ ընկերութեան մէջ ամենէն ապէկ աչքով չեն տեսնուիր միշտ օրինաւոր ամուսնայեցոց առջև, բայց և այնպէս հալածուած ալ չեն և իւրեանց բարեկամաց և ազգականաց դռները բաց են իրենց համար։ Այս կենակցութենէ եկած ծնունդները եթէ նոյն ազգին քահանայն մկրտել մերժէ, Ռումէն քահանայն կը մկրտէ առանց պատճառախնդրութեան։

Երկրիս քաղաքները, աւանները և գիւղերը կը գտնուին շատ օտար ազգի Քրիստոնեայք որոնք զուրկ են իրենց պաշտած Կրօնին քահանայէն, և կարողութիւն ալ չ'ունին հոգևոր արարողութիւններու համար իրենց քահանայն ուրիշ հեռաւոր տեղէ բերել տալու հարկաւորութիւն ունեցած առենին։ Այսպիսեաց համար երկրիս Սբ. Միւնհոդոսը կանոնագրութեամբ հաստատեց և պատուիրեց բոլոր Ռումէն քահանայից թէ, անյապաղ երթան անխտիր ամէն ազգի Քրիստոնէի տուն եկեղեցական արարողութիւններ կատարելու ուր որ կանչուած ըլլան, բարեպաշտութեամբ ընդունելով միանգամայն ամէն նուէր որ հաւատացեալները կուտան եկեղեցական խորհուրդ մը կատարելնուն համար։

Ընկերական կապին և խոցմտանքի ազատութեան վրայօք այս համառօտ տեղեկութիւններ տալէս ետքը, դամ պ. Մեղուի նամակին։

Պ. նամակագիրը Ռումանիոյ Հայութիւնը կոչուսեալ կ'անուանէ, կը պահանջէ թէ Հայը, Հայ ծնանի, ապրի և մեռնի, Հայութեան պարտուց և իրաւանց և հետևաբար Հայկական զգայմանց տէր լինի։ Վերջը օրինակ կուտայ (յարգելի բացառութեամբ) թէ Ռումանիոյ մէջ ամենաբարձր դասակարգի պատկանող Հայ մը նախատինք կը համարի իրեն Հայ անուն կրելը, ուրիշ մը միջնակարգի վաճառական կ'անպատուէ Հայութիւնն ոչոյ ծոցէն է ելած։ Կ'ըսէ թէ, Հայք Հայութենէ զատ ամէն ազգի պատկանող խառնուրդ են. Հայ են և չ'ունին Հայու անուն և սիրտ, թէ կը դիմեն ուրիշ ազօթատեղիներ, կը նպաստեն օտարազգի ճիմնազիաներ և նախակրթարաններ ևն։

«Դալով ամուսնութեան, կ'ըսէ պ. նամակագի-
«ը. տեղւոյս համար (այսինքն Պրայիլի) ամենա-
«փափուկ խնդրոյն, կուսանք Հայոց և երիտա-
«սարդք կը պակուին Ռումանաց և այլ Քրիստո-
«նէից հետ, և այսու Հայն է որ միշտ կը տուժէ,
«ոմանք քաղաքային ամուսնութեամբ կը վերա-
«պակուին և տէր կը լինին զաւակաց և ոմանք ալ
«ապօրինաւոր կենակցութիւններ կը հաստատեն
«տէր լինելով որդւոց, պտուղք ծածուկ ամուս-
«նութեանց։»

Աւելի առաջ երթալով կը շարունակէ «Ամուս-
«նութեան նկատմամբ Հայ օրիորդաց և երիտա-
«րիտասարդաց Ռոման կամ այլ Քրիստոնեայ ազ-
«գաց հետ անխափար խնամութիւնն է նախապատ-
«ճառ Ռումանիոյ Հայոց անյիշատակ կորստեան։
«Հայք սակաւաթիւ լինելով ամէնուրեք Ռոմա-
«նիոյ քաղաքաց մէջ և ցրուած կ'ապրին հեռի ե-
«կեղեցիէ և վարժարանէ, բնականաբար յարաբե-
«րութիւն քիչ կ'ունենան իրարու հետ և երբեմն
«այ չեն ճանչեր իսկ, ևն. ևն։»

Ուստի ամուսնութեան խնդիրը լմնցնելէն ետքը կ'անցնի երկրորդ խնդրոյն այսինքն Առաջնորդական խնդրոյն, որ կը շարունակէ այսպէս. «Քահա-
«նայի մը կամ առաջնորդի մը պաշտօնն աւելի
«ազդեցիկ և օգտակար կրնայ ըլլալ, երբ իւր հո-
«սին վրայ ունեցած հեղինակութիւնը ճանչցուէր,
«զի դժբաղդաբար Ռոմանիոյ մի քանի քաղաքաց
«Հայ քահանայքն աշխարհականի մը չափ արա-
«ժէք ունի յաճախ։» Քիչ մը աւելի վար կը ցուցնէ քահանայից ոմանց անկարգութիւնները, իրր թէ Առաջնորդի հսկողութեան տակ եղած քահանայները ամէնքն ալ նոյն տիպար բարոյականի տէր անձինք են անխտիր։

Վերոյգրեալ նամակին մէջ կրնան գտնուիլ ինչ ինչ ճշմարտութիւններ ալ, որոնք սրտի ցաւով կը տեսնէ զգայուն Հայը, սակայն եթէ մարդ ամբողջ նամակը ուշադրութեամբ կարդայ և անոր բովանդակութիւնը 'ի մէկ խնամատ ամփոփէ, յայտնի պիտի տեսնէ թէ պ. նամակագիրը շահախնդիր եկեղեցական անձ մը պիտի լինի, որ Ռումանիոյ երեք չորս գեղեցիկ քաղաքաց Հայոց ոմանց բարքը տեսնելով և մանաւանդ Կ. Պոլսեցի համարներուն կեանքը աչքի առջև ունենալով այն յաւարի նկարագիրը ամբողջ Հայութեան կը վերագրէ, և արտասուալից հառաջմամբ ողբալով կը պաղատէ թէ, Առաջնո՜ր դ, Առաջնո՜ր դ, հշանջնական այցելու հովի՜ կարգեցէք Ռումանիոյ մէջ որպէսզի ըստէ, մտրբէ և արմատախիլ անէ բոլոր ապականալ սովորութիւնները որ տարած են Հայութեան ամենամատուր կենցաղավարութեան և բարեպաշտութեան մէջ։ Խարազանով պէտք է ատորել Հայութենէ ամէն դասակիցներ, կրօնական ընտանեաց պառնը, դ

դիրքեն ապօրինաւոր կենակցութենէ եկած ծնունդները, հոգեւորական ժիրաբերութիւն և հաղորդութիւն ընդունող այսպիսի անդամներն էն։

Ո՞վ չ'հասկնար թէ այսպիսի բեղուն միայն վանական մը ձեռք կուտայ գործածել որ վանքի մը մէջ հանգիստ նստած փեթակի քաղցր մեղրը կ'ուզէ ծծել առանց աշխատանքի։ Եւ որպէսզի ամէն բան կատարեալ եղած ըլլայ, պէտք էր նամակին մէջ հետեւեալներն ալ աւելցներ Պէտք էր ըսել նաև.

Ե՜ Առաջնորդութիւն, այցելու մշանջենական հովիւ ընելու արժանաւոր անձը դնակ ես եմ, վասնզի Ռոմէականներն ընդունուած չեն Հայոց Առաջնորդ անյապաղ։

Դիցուք թէ մեր շահախնդիր անձը արժանաւոր անձ մ'է, թէ հովուութեան պահանջած ամէն կատարելութիւններն ունի, թէ Պուքրէշտ մայրաքաղաքը հաստատած է իր առաջնորդական աթոռը։ Սակայն ինչ պաշտօն պիտի վարէ, ինչ պիտի ընէ այն Առաջնորդը որպէսզի Հայը Հայ ծնանի, ապրի և մեռնի. որպէս զի ծնողք իւրեանց զաւակունք օտար վարժարաններ չի ղրկեն, Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց դէմ խառն ամուսնութիւն չընեն, Հայերը ցրուեալ չընակին, այլ ամենքն ալ միայն եկեղեցւոյ բոլորտիքը կենդրոնացեալ հաստատեն իրենց բնակութիւն, ուրիշ աղօթատեղիներ չերթան, Հայկական անուններ գործածեն Հայերէն խօսին ևն. ևն։

Այս ամենադժուար խնդիրներուն և ո՛չ մէկը պիտի չկրնայ գործադրել վանդի, հապա միայն չորս հազարի մօտ Հայ անձինք (ո՛չ թէ տասը հազար ինչպէս որ պ. նամակագիրը կ'երևակայէ) ուրուն թուանշաններն ալ ուրիշ առթիւ կուտամ, որոնք հինգ միլիոնէ աւելի այլ և այլ ազգէ բնակչաց մէջ ցրուեալ կ'ապրին, անկարելի է, կ'ըսեմ, որ Հայկական ամէն սովորութիւնները պահեն անխախտ ըստ եկեղեցական պահանջման, և այսու ամենայնիւ ես ալ կը հաստատեմ թէ կան շատ մը Առաջնորդի վերաբերեալ պաշտօններ ալ կատարելու, թէ աշխարհական և թէ կրօնական տեսակետէ առնելով։

Աշխարհական կետէ պիտի նայի հանդիսաւոր օրերու նախարարաց և թագաւորին պաշտօնական ներկայացումներ ընել փառաւոր Դուբէի մէջ պըսպտելով, այն ալ քաղաքագէտ անձ մը եթէ լինի։ Հարուստ ընտանեաց համեմաճաշակ կերակուրներով լիուլի սեղանը պիտի նախագահէ, հոն ալ եթէ հրաւիրուած լինի։ Հարուստներուն քմայ և հաճութեանց խունկ պիտի ծխէ, իսկ չքաւորները Հայութիւն պահելու պիտի ստիպէ ևն։ Բայց ասոնցմով Հայութիւնը ինչ վաստակեցաւ։ Իսկ կրօնական կետէ պիտի հոգէ որ քահանայներէն ամենք բաց ճակատով ընդունուին տեղանը ընդունարանին և Բոգոսի պատճէնն ամենայն ջերմեռանդութեամբ լինկրկին, անհաւատները պիտի նայի ապտրելու, ապօրինաւոր ծնունդները պիտի հրամայէ ընդունել ևն, ևն։ Եւ այս ամէն արիւն հոգոցութիւններով հանդերձ, հետայսայսա՞ծ է արդեօք Հայութեան կորստեան վասնզը Ռոմանից Հայոցմէ, ո՛չ։ Ինչպիսի գաւազան ունենայու է այն Առաջնորդը որ կարող լինի խառն ամուսնութիւնները արգիլել, կամ բուն իսկ ապօրինաստ կենակցութիւնները անհետացնել, որ բարերախտաբար քիչ են Հայոց մէջ այսպիսի դէպքեր, աղաւաղութեան այս ընդարձակ ասպարէզին մէջ, ուր որ եկեղեցականի մը ազդեցութիւնը տեղի չունի։ Մոռածեց արդեօք պ. նամակագիրը թէ, եկեղեցական խստութիւն բանեցնելով կրնայ մեծ հովիւ առանց հոտի։ Մոռածե՞ց նաև թէ այսպիսի պարագայներու մէջ ամէն դժգոհ անձ անով տեղով պիտի երթայ ուրիշ Քրիստոնեայ աղգաց և մանաւանդ Ռոմէնայ եկեղեցւոյ ծոցը մտնել, ուր որ ընդունուած են առանց խորութեան։

Բայց թողում՝ վայրկեան մը մեր պ. նամակագիրը, որ իր նպատակին հասնելու համար կ'ջանայ այնպէս նկարագրել թէ իր ծանուցած մուլութիւնները Հայոց սեպհական մոլութիւններ են, և թէ Առաջնորդին գաւազանը տեսնելով, վախերնուն պիտի դան հնազանդին և մեղայ ըսեն, և դանք տեսնել թէ ինչ կ'ընեն երկրիս միւս ազգաց առաջնորդներն ալ քաղաքական օրէնքները առջևնին ունենալով։

Երկրիս տիրող կրօնը Յունադաւան է, ունին երկու Մետրապոլիտ։ Նախագահ Մետրապոլիտը Պուքրէշտ կը նստի, երկրորդը Եաշ։ Եկեղեցական մեծ խնդիրները Ս. Սինոդոսը կը լուծէ որ բաղկացած է երկու Մետրապոլիտներէ, տասներկու եպիսկոպոսներէ և քանի մը վարդապետներէ, ուներ ութ առաջնորդարան և 2000էն ալ աւելի քահանայք, և եկեղեցւոյ այս միութիւնը կրօնական և ուսումնական նախարարութեան պաշտպանութեան և խնամակալութեան տակ կը գտնուին, մեծամեծ արտօնութիւններով։

Հիմակ քանի մը օրինակներով ցուցունենք թէ այսպէս կազմուած եկեղեցական կառավարութիւն մը ինչպէ՞ս կրնայ գործադրել իր արտօնութիւն, ինչպէ՞ս կրնայ օգտակար և աղբեցիկ ընել իր պաշտօն և ծանրացնել իր հօտին վրայ ունեցած հեղինակութիւնը։

Ա. Խղճմտանքի ազատութեան և մամուլի ազատութեան շնորհիւ, երկրիս լրագիրներ անխնայ և հեգնաբար կը քննադատեն ո՛չ միայն ամենաբարձրաստիճան կղերականքը, այլ և կը հերքեն կրօնքը, հաւատոյ մասին վերաբերեալ հաստատութիւնները ևն. որոնց դէմ կղերականք չեն կրնար մաքառիլ, քանիթէ իրենք ալ իրենց օրկաններուն միջոցաւ պատասխանել եկեղեցականաց սովորական ոճով, այսինքն թերահաւատ կամ անհաւատ, անօրէն, անբարոյական են խօսքերով։

Բ. Քանի մը տարի կայ որ երկու Ռումէն վարժապետներ սկսան անաստուածութիւն ուսուցանել աշակերտաց, կրօնից վարդապետութիւնները հերքել և սրբոց պատկերները անարգել նոյնիսկ վարժարանի մէջ դասախօսութեան ժամանակ։ Երկրիս բոլոր կղերը ոտք ելաւ, և իրաւունք ալ ունէր, վասնզի ասոնք այնպիսի հարուածներ են որ ոչ միայն կղերին շահուն կը դպչին ուղղակի, հապա ամէն բարեպաշտ հաւատացեալին ալ խղճմտանքը կը վրդովեն։ Բայց ի՞նչ կրցան ընել։

Այսչափ միայն ըրին որ յիշեալ վարժապետաց մէկը պաշտօնէ հանուեցաւ, առանց ուրիշ դատաստանի ենթարկուելու։

Գ. Նոյն վարժապետները որ երկու եղբարք են, երկու քոյրերու հետ ամուսնացան քաղաքական օրինօք։ Մետրապոլիտը բողոքեց բարձրագոյն արդարութեան վճռաջինջ ատեանին։ Բարձրագոյն ատեանը Մետրապոլիտին բողոքը մերժեց և քաղաքական ամուսնութիւնը օրինաւոր վաւերեց։ Քանի մը տարի ետքը պաշտօնանկ վարժապետը որ միանգամայն Socialiste ալ է պատգամաւոր ընտրուելու պատիւն ունեցաւ քուէից առաւելութեամբ, թէպէտ մեծ ընդդիմութիւն կ'ընէին իրեն դէմ եկեղեցականք. անհաւատ և անբարոյական անուանելով։

Դ. Հազիւ չորս ամիս անցած է, քանի որ Ռումէն ուղղափառ Քրիստոնեայ մը Հրեայ օրիորդի մը սիրահարուելով Քրիստոնէութիւնը կը թողու և թլփատուելով Հրէութիւն կ'ընդունի, և այսու ամենայնիւ, տեղէ մ'ալ չ'աքսորուեցաւ, միշտ տէրութեան պաշտօնի մէջ է, ինչպէս որ էր։ Ի՞նչ կ'ըսէ պ. Մեղու այս տեսակ կրօնափոխութեան։

Ե. Հազիւ ամիս մը անցած է, քանի որ Եաշ նստող Աւստրօ–Հունգարական հիւպատոսը Գուքբէշտ կ'ամուսնանայ Ռումէն մեծատան մը օրիորդի հետ։ Քաղաքական ամուսնութիւնը կատարուելէ ետքը բոլոր հանդիսականք կ'երթան Լատինաց եկեղեցին ուր որ ամուսնացեալները կրօնական պսակը կ'ընդունին։ Որու՞ն աչքին կը տուժեցաւ այս պարագայի մէջ։ Օրբազան Մետրապոլիտը չէր գիտեր առաջուց թէ այս այսպէս պիտի կատարուի։ Ինչո՞ւ չ'արգիլեց։ Եւ այսպիսի պարագայներ ստէպ կը պատահին ամէն ազգաց մէջ։

Փափաքելի է գիտնալ թէ ի՞նչ դիրք կը բռնէր պ. Մեղուի առաջնորդը, եթէ տեսնէր թէ Հայ երիտասարդ կամ օրիորդ մը խառն ամուսնութեամբ ուրիշ Քրիստոնէից եկեղեցի կը մտնէ պսակուելու։ — Աչքերը պիտի գոցէ որ չ'տեսնէ, ականջները որ չ'լսէ, նման ինչպէս որ կ'ընեն Ռուսիոյ Հայ Առաջնորդներն ալ, որոնք տէրութենէն մեծամեծ խաչերով և ուրիշ պատուանշաններով կուրծքերնին կը զարդարեն։

Գ. Մեղու կ'ըսէ թէ, Հայաստանեայց Եկեղեցին հրաման չ'տար կրօնականաց ապօրինաւոր կենակցութեամբ ապրողներուն տուն այցելել, և անոնցմէ եկած ծնունդները մկրտել։ Սակայն Ռումէն կղերը շաբթուան մէջ միայն քաղաքիս մէջ առնուազն եօթը այսպիսի մկրտութիւն կը կատարէ, և նոր մկրտեալին ծնողաց տունն ալ կը մտնէ առանց խտրութեան։ Կը հասկնամ խստութիւն կրօնի Հայաստանի մէջ, ան ալ հին ատենները երբ Հայ ազգութիւնը իւր աշխարհական և հոգևոր տիրապետութեամբն կը փայլէր։ Բայց չեմ հասկնար այսօր, երբ Հայքս անտէր և անպաշտպան մնացած լինելով, մինչդեռ միւս ամէն ազգերը կը նային Հայութիւնը անջատելով մաս առ մաս կլլել, մեր եկեղեցականք ալ բռնաբարութեամբ ճնշեն Հայը, որ այս ճնշման պատճառաւ խմբովին կրնան օտարանալ այսպիսի ազատ երկրի մը մէջ, ուր որ կրօնից խտրութիւն չ'կայ։ Տեսնէ մեր պ. Նամակագիրը թէ ի՛նչ միջոցներով կը ջանան մեծ տէրութիւնները կլլել զՀայեր, ինչպէս նաև զուրիշ ազգեր ալ իրենց լայնատարած ովկիանոսներուն մէջ։ Ռուսը վարձատրութիւններով և ճնշմամբ, Հռովմէականք և Բողոքականք համոզմամբ և խաբէութեամբ, իսկ Ռումէնը ազատութեամբ, որ ամենէն օրինաւոր ճամբան գտած է կարծեմ։

Հոս ունիմ օրինակ մ'ալ այնպիսի Առաջնորդի մը ինչպէս որ պ. Մեղու կը պահանջէ։

Երկու տարի կայ քանի որ Եաշու Լատինացւոց եկեղեցին Նոր Առաջնորդ մը եկաւ։ Այս միջոցիս պատահեցան Հռովմէադաւան ննջեցեալներ, որոնք յանկարծակի մեռնելով չ'կրցան Քրիստոնէական

վերջի պարտաւորութիւններն կատարել։ Առաջնորդը ասոնց թաղումը մերժեց, առարկելով թէ շատոնց չէին հաղորդուած և թէ կրնային առաջուց մտածել թէ օր մը պիտի մեռնին, ուրեմն պարտական էին ժամանակին հաղորդուիլ։ Եւ ի՞նչ օգուտ ունեցաւ Առաջնորդը այս մերժումներէն, միթէ՞ ննջեցելոց տէրերը մեղայի եկան, միթէ՞ խոստացան ապօթք ընել և պատարագներ տալ ննջեցելոյն հոգւոյ փրկութեանը համար. ո՛չ։ Գրնացին Ռումէն Քահանայից դիմեցին, և լաղրայ միջոցաւոր ազգու բողոքեցին Առաջնորդին վարմունքին դէմ և իրմէ ալ հոլցան։ Ուրիշ օրինակ մ՚ալ, անցեալ տարի քաղաքիս Աւտրիայ հիւպատոսը անձնասպան կը մեռնի։ Վիէննայի կառավարութիւնը հանդիսաւոր թաղում կը հրամայէ։ Բայց Լատինայ Առաջնորդը չ՚ուզէր թաղման արարողութիւնը կատարել, կրօնական անձնասպան մեռած է։ Այն տեղն Պուքրէշտ կեցող դեսպանը որ թաղման հանդիսին ներկայ էր, Բողոքականայ քահանայն կը հրաւիրէ, որ եկաւ ո՛չ միայն թաղման արարողութիւնը կատարեց, հապա այնպիսի սրտաշարժ դամբանական ճառ մ՚ալ խօսեցաւ, որ մեռելոյն թեթեւամտութիւնը գթութեան առարկայ ընելով, ամենուն աչքէն արտասուք թափել պատճառեց։

Լատինայ Առաջնորդը Հռովմէն ուղղակի կախում ունենալով կրցաւ այս տեսակ մերժումներ ընել և բռնութիւն անգամ բանեցնել միամիտ ժողովրդեան վրայ որ դեռ Կրօնականայ խնամակալութեան տակ կը գտնուին, հապա մեր առաջնորդն ալ պիտի կրնա՞յ նմաններն ընել։

(Շարունակելի)

Լ. ՍԻՄԱԳԱՇԵԱՆ
ԵԱՇՈՒ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՊԵՏ

Երազ

Երազը՝ ինչպէս շատերին ծանօթ է, առաջ է գալիս մարդկանց քուն եղած ժամանակին մի որ եւ իցէ ցնցումից, ստամոքսային խռովութիւնից. օր ցորեկով մտքից անցած մի ինչ եւ իցէ առարկայի վերայ սաստիկ զբաղվելուց, եւ կամ մի յուզիչ հանգամանքից։

Երազը՝ հին ատենները մեծ, շատ մեծ պատիւ ու յարգանք էր վայելում. մարդկի զանազան մեկնաբանութիւններ էին տալիս, սկսած հասարակ մահկանացուներից մինչեւ թագաւորները, մարգարէները, նահապետները ու Հայրապետները հաւատ էին ընծայում, մինչեւ անգամ իրանց յաղթելու կամ յաղթուելու ճակատագրային բաղդը հիմնում էին մի որ եւ իցէ երազատեսութեան վերայ։

Ինչպէս պատմութիւնը աւանդում է, շատ անգամներ պատահել է որ, երազները՝ իրանց ճշգրտութեամբը կատարուել են, եւ հէնց դորա համար ալ հին ժամանակներում երազը հաւատի պէս մի բան դարձել էր. որը շարունակվում է մինչեւ մեր լուսաւոր համարած օրերն. հակառակ գիտութիւն ըսուածի այնքան բուռն ընդդիմութիւններին էլի երազը իշխում է, էլի գործ է գնում իւր ազդեցութիւնը ամէն դասակարգի մարդկանց վերայ։

Աւելորդ համարում ենք մանրամասնապար յիշել այս տեղ Յակոբ Նահապետին, Հայր Աբրահամին, Սառային ու Սահակին, Սամուէլին ու Սաւուղին, Փարաւոնին, Յովսէփին, Դաւիթին, Յովհաննէսին եւ այլ շատերին, մինչեւ մեր Հայերի մին Հայրապետ մեծ Ներսէսին, Հայոց տառերը հնարող Մեսրոպին որուն Աստուածային ներշնչում, կամ երկնքից իջած շնորհք են ասում։

Մենք նպատակ չ՚ունինք հաւատաքանութեան նրբութիւնների վերայ խօսելու. դա՝ հոգեբանների գործն է, նորանց կը թողունք որ մեկնաբանեն եւ ցոյց տան թէ՝ ո՞րն է երազը, եւ ոյն է տեսիլքը, ցնորքը կամ երեւակայութիւնը, եւ կամ նրանց պատճառները. միայն մենք այսչափը ասում ենք թէ, Երազները՝ իրանց կարգին շատ ու շատ գործեր են կատարել, մեծամեծ դերակատարութիւններ են արել. ինչ որ ամբողջ Ազգեր, ինչ որ ամբողջ ժողովուրդներ, ամբողջ բանակներ չեն կարողացած անել. նոյնը մի մանաւոր անհատի միջոցաւ, մի որ եւ իցէ երազի ոյժով կատարուել է շատ ու շատ հեշտութեամբ։

Մի որ եւ իցէ ախտաւոր, անդամալոյծ կամ ընդարմացած մարդ՝ յանկարծ երազումը տեսնում է այսինչ աղբիւրից լուացվելիս, կամ այնինչ Սուրբի ասելուց բըժշկվում է, կոյրի աչքը բացվում է, գոսը առողջանում է։ Հաւատի տպաւորութեան տակ մարդ՝ ելեքտրականանում է, մի տարօրինակ զօրութիւն է ստանում, շատ ժամանակ նշանաւոր բանաստեղծների «քլը-ի քոբ-ոցնեբը» նոյնպէս առաջ են գալիս քնացած ժամանակ երեւակայութեան որ եւ իցէ մի սաստիկ բորբոքումից, որոնք զարթնելով գրի են առել իրանց երազով յայտնուած հրաշակերտ գործն, եւ նրանով սքանչացրել են մարդկանց։ Ցայտնի բան է թէ՝ բանաստեղծը գործ ունենալով մարդկանց հոգեկան լարերի հետ. ինքը եւս արդէն լարուած է եղել մարմնական մտածմունքներից դուրս, հանդարտ քունի մէջ երազի ելեքտրականացուցիչ երեւակայութիւնից։

Մարդ՝ որքան մօտենում է պատմութեան, որքան մօտենում է հերոսներէ կեանքին ու կենսագրութեանց, որքան ընտելանում է նոցա գործերին, նոցա գաղտնիքներին, նոյնքան մօտանց տեսնում է որ, նորանց շատերն ներշնչվել են եղել, մի երազից, մի վերացեալ մտածմունքից, տպաւորութիւնից, որը՝ եղել է իրանց անձնապատան ծրագիրը—փրօկրաման. մինչեւ իրանց ծայրագոյն յաղթանակը, մինչեւ իրանց անմահ ու անմոռաց յիշատակը. . . . . ։

Պատմութիւնը նոյնպէս չի խնայում մեզ ցոյց տալու

այս կարգի ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԳԱՂԱԲԱՐԻ ծառայողների անուանքն, որոնց հերոսական գործքերի վերայ խօսելը մեզի հեռուն, շատ հեռուն կը տանի, ինչպէս են — Ուռ-չինկթըն, Գուլիէլմօս, Պոնաբարթ, Կալիպալտի, Մարքօ Պօծառի, Գալագօթրոնի, Պուլկար Սարկաւագ եւ այլ շատեր. ինչպէս եւ Հայերիս պատմական ամենափայլուն գոնարները, ԳԱՅԼ ՎԱՀԱՆ, ԳՈՂ ՎԱՍԻԼ եւ ՔԱՋ ԹՈՐՈՍ։

Եգիպտոսի յայտնի դիւցազն Մէհմէտ Ալիի համար պատմըվում է թէ՝. նա ինքը լինելով Դավալացի Թիւրք, մի հասարակ մշակ մարդ, երբ մի ժամանակ ծառայում է եղել մի ուրիշ աղչէ մօտ, յանկարծ մի օր երազումը տեսնում է ինքը իրան Եգիպտոսի տիրապետ դարձած, երազը՝ պատմում է իւր ընկերակից Արապկիրցի հաճի Մամասին, որը՝ դժբաղդութեան ջրոյ-խով բաժանվելով իւր Հայրենիքից ծառայում է եղել միեւնոյն աղչէ մօտ։ Մէհմէտ Ալի իւր երազը պատմում է նորա այնպիսի անձնավստահութեամբ, որպէս թէ՝ արդէն տէր ու տիրական դարձել է Եգիպտոսի ոսկեպարապ աշխարհին։ Հայի բնական սովորութեամբ հաճի Մամասը ծիծաղում է Մէհմէտ Ալիի անձնավստահ ասածների եւ անիրականելի երազի վերայ, եւ ինչպէս կատակ (հանաք) ասում է, ուրեմն ինչ պաշտօն կը տաս ինձ այն ժամանակ, երբ Եգիպտոսի տէրը կը դառնաս։ Մէհմէտ Ալի՝ դարձեալ անձնավստահութեամբ խօսանում է Մամասին կարգել Եգիպտական Խիվութեան մառանապետութեան պաշտօնին մէջ։

Երազի օրից սկսած փայլուն տեսարանը չի հեռանում երբէք Մէհմէտ Ալիի աչքից, ամէն վայրկեան կրկնում է նորա հոգին, նորա զգայմունքը, շարունակ մղվում է դէպի հոն. գիշերը պառկելիս միշտ երեսը այն կողմը դարձուցած քնում է, մի խօսքով՝ Մէհմէտ Ալի մի տեսակ գերի է դառնում իւր սիրական երազին։ Կատարեալապէս համոզմունք է գոյացնում եւ ուզում է թռչիլ, շուտ թռչիլ հասնիլ իրա հանգերձեալ փառքին—Մէմլուքների մնացորդայ այժը ջախջախելու։ Կարծում է թէ՝ անբերեւոյթից մի ձայն շարունակ կանչում է իրան. Մէհմէտ Ալի, ինչ է կաչկանդել քեզ. ինչո՞ւ փակուած մընում ես սաոր ծառայութեան մէջ, եւ չես շտապում. յաջողութիւնը քեզ է սպասում. . . . ։

Ինչ՞ ասած. մի բան կաչկանդել է նորան, կապել է ոտներին, կապել է ձեռներին, միայն մէկ բան տանջում է նորան եւ արգելառիթ է դառնում, թոյլ չի տալիս փրկաւէտ ձայնին հնազանդելու։ Դա՝ իրա հարկաւոր եղած անիծեալ դրամի պակասութիւնն է, դա՝ իրա ջրոյ-ինն է, որովհետեւ Մէհմէտ Ալի՝ այնքան ալ հասարակ ընտանիքից չէ, հասարակ մարդու զաւակ չէ. իրա հարուստ հոգին, հարուստ զգայմունքը, նոյնքան եւս ուրիշ հանքամանքների պահանջները թոյլ չեն տուել որ հարուստ նիւթական եւս ունենայ. իրա բոլոր ծառայութեան արդիւնաբերութեամբ հազիւ կարողացել է նա ձեռք բերել մի զոյգ արծաթապատ ատրճանակ, մի ջրոյ ճաշոյ հրացան եւ նոյնքան տղամարդի վայելուչ հանդերձանք. որովհետեւ Մէհմէտ Ալի՝ լաւ հասկացել է թէ՝ մարդկանց աչքերը ինչո՞վ հրապուրվում են, հոգին՝ ինչից ստիպուած սիրում է. ուստի Մէհմէտ Ալիի համար դժար է, շատ դժար գրաւ տալով փող վեր առնելը, նոյնչափ եւ դժար է բաժանվել իրա սիրական հանդերձներից, զէնքերից, հերօսական պատկառելի արդ ու զարդից—Ռօ-ԼԷՌԷՆ։

Ամաչում է մեծասիրտ մարդը. դժվում է մեծահոգի մարդը, չի ուզում ոչ ոքին տեսնել, ոչ ոքին գաղտնիքը յայտնել։ Հաստատուած իրողութիւն է որ առնական կերպարանք, դիւցազնի կոչտ ու խրոխտ խօսուածք՝ արգիլում են նորան փափուկ սեռի ՍԱՆԴՈ-ԽԷՆ վեր եկնել, եւ մտնել ոսկի ՆՆՋԱՐԱՆը ՍԷՄԵԼՈ-, ԵՐԷՐՊՈՓԷԼՈ։ Կալիբսօներ չեն սիրում Մէնտորներին, նոքա ուզում են Նեկտարը խմացնել միայն ու միայն ԹԷԼԷՄԱԿԷՆԷՐԷՆ։ Վերջապէս ինչ՞ արած. պէտք է մի բան մտածել, մի բան անել, ախբր դանդաղելու չէ։ Հաճի Մամասից խորհուրդ հարցնելու է, հաճի Մամասը Հայ է, եւ Հայը շատ խորամանկ է, ուրիշին ճանապարհ ցոյց տալու մասին։ Հայը՝ 'ի ստեղծմանէ աշխարհի, գուցէ եւ անկէ ալ առաջ հաւատարիմ ու առատաձեռն է օտարին համար. Ս. Պատարագը՝ աւելի հեշտալուր եւ սիրաժամամ է ասում է Աշուխենց Խորէն աղբարը, եւ Ե՞ՂՅԼԻՆ, Ե՞ՂՅԼԻՆԸ աւելի աւելի ներդաշնակ է Եկեղեցւոյ մեղեդիների համար ասում է Մաքսուտ Ամիրայի մանչուկը Սիմոն աղբարը։ Հաճի Մամասը՝ հայրենիքից հալածուած մի ծառայ մարդ է, սակայն էլի Հայ է եւ խորամանկ ասում է Մէհմէտ Ալի, եւ դիմում է նորա խորհրդին, որը առաջնորդում է մի ուրիշ Հայի, ոսկիի շուքով ապրող մի Երամ անուն Հայի մօտ գրաւ տալով մի փոխառութիւն անելու Մէհմէտ Ալի՝ ճարահատուած առաջարկում է Երամին իրա սիրական արծաթապատ Ռօ-ԼԷՌՆԵՐԷՆ որքանը կը կամենայ վեր առնել եւ իրա հարկաւոր գումարը չնորհ բերել։

Բարբարոս ժամանակ է, սոխին քիթը կտրելուց շատ հեշտ է մի ԿԵՎՈ-Ը անդիի աշխարհ խրկելը։ Արքայութեան եւ գժոխքի բանալին ԷՆԷՐԷՆ մէջկից կախուած մարդ է դալիս, ուստի ո՞վ գիտէ այն ժամանակուայ ինչ՞ ԽՈՀԵՄՈ-ՆԵՄԷ Երամ աղան՝ առանց գրաւը ընդունելու խնդարկվում է վճարել հարկաւոր գումարը, եւ Մէհմէտ Ալի գօտեպնդուած ճանապարհ է ընկնում դէպի Եգիպտոս. իրա սիրահարուած երազի ցոյց տուած ծրագրի—փրօկրամայի համաձայն. առանց մոռնալու սակայն իրէն նախաձեռնտու հաճի Մամասին եւ Երամին, որոնց անուանքն յատկապէս պահում է իւր երախտաճանաչութեան յիշողութեանը մէջ։

Մէհմէտ Ալի հասնում է Եգիպտոս եւ զբաղվում է միայն ու միայն իրան յայտնի եղած ծրագրով։ Գործում է այնպէս, ինչպէս ինքն է կամենում, ինչպէս կարդացել է իրա երազի մէջ. յորմէ հետէ սկսում է Մէհմէտ Ալիի փառապանծ պատմութիւնը ԲՈ-ԸԷԷՐԷ աշխարհում, որը չը կարծենք թէ անծանօթ մնացած լինի հետաքրքիր եղողների համար։

Մենք այսքանը գիտենք թէ՝, կատարուել են Մէհմէտ Ալիի խորհուրդները, երազը իրագործվել է, եւ նորա չը-նորհիւն է որ, այժմ նորա թոռան թոռը Աբբաս փաշայ դասնվում է Եգիպտոսի Խիվութեան գահին վերայ։

Երամի սերունդից Գէորգ պէյ Երամեանը՝ բնակվում է այժմ Փարիզ եւ փառաւորապէս ապրում է Մէհմէտ Ալիի ոսկի աւազանից իրան հասած միլիոնների շնորհով. եւ Մամասի սերունդից Պօղոս էֆ. Կարապետեան բնակվում է Գահիրէ, եւ ապրում է իրա բազմարժէք կալուածների եկամուտով։

Ճիշդը ասած, Պօղոս էֆ. Կարապետեան իրա այդ հարստութեան վայելքից անմասն չէ թողած եւ իրա Հայրենիքը, իրա Ազգը, սակայն Երամեանք–Գէորգ պէյ, իւր եղբայր Կարապետ պէյ (զարա քէհեա) եւ որդին Աբրահամ փաշա. իրանց հարստութեան եւ առատ միջոցների համաձայն ոչ ինչ չեն արած իրանց կարօտ ու թշուառ Ազգին համար։ Հանգուցեալ երգիծաբան պ. Ց. Պարոնեան այսպէս է գրում Կարապետ պէյ Երամեանի կենսագրութիւնը Ազգ. ջոջեր գաւեշտագրքին մէջ։

ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ԵՐԱՄԵԱՆ

Դպիր մը շինէ։

Մեր երազաբանութիւնը՝ այս կերպով ուզում ենք փակել, այսինքն մեծատուն ու մեծալեզու Հայոց Ազգը, որը շատ լաւ գիտէ թէ՝ օրական քանի՞ մուկ է ուտվում Զինաստանում, քանի՞ կատու է մեռնում Ամերիկայում, քանի՞ բորոտ կամ կաղած շուն է գտնվում Անգլիայում, քանի՞ պոռնիկատուն գտնվում է Փարիզում, քանի՞ ստաքան գարեջուր է խմվում Աւսթրիայում, եւ կամ քանի հաւ ու ճնճղուկ ապրում են Գերմանիայում, ազնիւ մտածմունքով ոչ մի օր կամ վայրկեան չի ուզում հասկնալ թէ՝ իրա պատկանած Ազգի զաւակներն ինչ կերպով փճանում են, ինչ ցաւ, ինչ դարդ ունին, ո՞ր ճանապարհը տանում է Կիլիկիայ կամ Հայաստան, երկրագնտի որ գծումը գտնվում է Զէյթուն։

Ասացինք եւ էլի ասում ենք, երազները միշտ ունեցել են իրանց ներգործութիւնը, վերացեալը թանցրացել է, երեւակայականը իրականացել է, սակայն բացորոշապէս հասկանալի է որ. առանց ՄԱՄԱՄՆԵՐԻ, *առանց* ԵՐԱՄՆԵՐԻ *երազը կը մնայ միշտ երազ։*

Վ.ԷՏԻՐԱՆ

ՏԵՂԱԿԱՆ

Ամսոյս 15ի Կիւրակէ օր տեղւոյս Ազգային խորհրդարանի մէջ ընդհանուր ժողով տեղի ունեցաւ թեմական պատգամաւորի ընտրութեան եւ արժանաւոր Եպիսկոպոսներ ցոյց տալու համար վասն ամենայն Հայոց Կաթողիկոսի. ժողովը ընտրելի ցոյց տուաւ հետեւեալ Ս. Եպիսկոպոսունք։

1. *Գեր. Խորէն Արքեպ. Լուսինեան*
2. » *Ստեփաննոս Եպ. Յովակիմեան (Առաջնորդ Նիկոմիդիոյ)*
3. » *Մաղաքիա Եպ. Օրմանեան*

Ցուսով եմք որ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ քաղաքացի մերայինք ալ կ'ընտրեն սոյն ամենաարժանաւոր Եպիսկոպոսները, Ս. Լուսաւորչայ գահուն վրայ տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետ։

ԲԱՌԵՐՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ի՞նչ է ազգասիրութիւնը. — Մոտան անցած եւ գինն ինկած ապրանք մը։

Ի՞նչ է անիրաւութիւնը. — Ժամանակիս իրաւանց եւ արդարութեան նժարը։

Ի՞նչ է մանկութիւնը. — Ժամանակիս վերջին մոտան։

Ի՞նչ է գրպանին մէջ միշտ փող ունենալու ճամբան. — Վարպետը պ. Մ. Փորթուգալեանն է եւ իւր գործակալները։

Ի՞նչ է հնազանդութիւնը. — Հայուն ամենէն մեծ առաքինութիւնը։

Ի՞նչ է հարստութիւնը. — Հայուն համբերութեան վարձատրութիւնը։

Ո՞րն է անօթութեան դիմանալու արհեստը. — Հայոց խմբագրութիւնը «Բոյժ Մ-բոէյլ Արմենիէն»։

Ի՞նչ է իրաւունքը. — Հզօրագունին չէնքը։

Ի՞նչ է արդարութիւնը. — Բառարանին մէջ պարապ տեղ չմնալու համար գրուած բառ մը։

Ի՞նչ է սուտը. — Հ. Հ. Մ. գրամագլուխը։

Ի՞նչ է կեղծիքը. — Հ. Հ. Մ. փառքը։

Ի՞նչ է խաբէութիւնը. — Հ. Հ. Մ. հանճարը։

Ի՞նչ է անփոփոխելին. — Հ. Հ. Մ. կանոնագրութիւնը։

Ի՞նչ է անգործագրելին. — Պ. Մ. Փորթուգալեանի ծրագիրը։

Ի՞նչ է յոյսը։ — Հայուն ապրելու միջոցը։ (Ո՛ր յո՜սով ապրիլ անյոյս կորիլէ։)

Ի՞նչ է ապագան. — Հայուն չ'հասած տեղը։

Ի՞նչ է շարը. — Հայրենասիրաց ընկերութեան մը գանձապահ լինելը։

Ի՞նչ է Հայկական խնդրոյն վախճանը. — Ցուսա՛, ապասէ՛, եւ տե՛ս։ (Երանի որոյ ոչ էջէ պէսէալ Ի հաւապայէ։)

ՄՈՒՐՃ

ԱՅԼԵՒԱՅԼԿ

Քոքէ Ի Թուխիոյ.— Գերմանիոյ նշանաւոր բժիշկք բազում փորձերով հաստատած են թէ մարդուս թոքն եթէ ճնշուի, արիւնը չ'կրնալով պէտք եղածին չափ շրջան ընել թոքին մէջ, արեան նուազութեան տեղի կը տրրուի եւ հետեւանքը կը լինի թոքախտի երեւումն։ Անասնոց վերայ փորձեր են դայս. մեքենայով ճնշեր են նոցա կուրծքն, եւ ապա հասանելով զիներ տեսեր են որ այդ անասունք թոքախտի ենթակայ եղած են։

Ցոյս Ի Լոն.— Առ մարդէն յոյսն ու քունը, կ'ընես գնա աշխարհի թշուառագոյնը։

ԳէրոՒՒՒՒ Ի ԼմասոՒՒՒՒ.— Սիրոյ ծնողքն է Գիտութիւնն, իսկ Իմաստութիւնը նոյն ինքն սրբէ։

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԹԻՆՃԻԷՖ

ՐՈՒՄՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ.Ս. ԹԻԹԻՆՃԻԷՖԻ

Скоро-печатницата на Спиро Гулабчъв